ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԼԱՎՐԵՆՏԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ (*«Հայերի ցեղասպանությունը և երեկվա Հալոցաստը անժխտելի իրողություն են. ընդհանրություններ և ժխտման փորձեր»*).

Պատմաբան, թանգարանագետ, հասարակական գործիչ, պատմական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն, Ազգային անվտանգության հիմնախնդիրների միջազգային գիտությունների ակադեմիայի համակարգում գործող Հայաստանի ակադեմիայի նախագահ, Անիի պահպանության և ուսումնասիրության միջազգային գիտական կենտրոնի, ինչպես նաև Երկրաշարժից պատմության և մշակույթի հուշարձանները պահպանելու միջազգային կենտրոնի նախագահ, Հայաստանի պետական մրցանակի դափնեկիր, Ֆրիտյոֆ Նանսենի անվան միջազգային ոսկե մեդալակիր:

Գիտական հետազոտությունների շրջանակն հիմնականում ընդգրկում է հայ ժողովրդի հնագույն շրջանի պատմության և մշակույթի հիմնախնդիրները, հայ ժողովրդի ծագման և կազմավորման, Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման հարցերը: Հեղինակն է խնդրո առարկա հիմնախնդիրներին նվիրված շուրջ հարյուր գիտական հոդվածների և 10 մենագրությունների («Միջազգային հանրությունը դատապարտում է Հայոց ցեղասպանությունը» (1998), «Ֆրանսիան հրապարակայնորեն ճանաչում է Հայոց ցեղասպանությունը» (1998), «Հայոց ցեղասպանության հրապարակայնորեն դատապարտման և ճանաչման ժամանակագրություն (1915-2000թթ.)» (2001), «Ամերիկայի միացյալ նահանգները, Հայոց ցեղասպանության դատապարտումը և թուրքական հակազդեցությունը» (2001), և այլ բազմաթիվ աշխատությունների): Զեկուցումներով հանդես է եկել մի շարք հանրապետական և միջազգային գիտաժողովներում, իր ակտիվ մասնակցությունը բերել ցեղասպանությանը նվիրված միջազգային քանավեճերին:

ԳԵՎՈՐԳ ՍՏԵՓԱՆՅԱՆ (*«Հայերի կոտորածներն ու ինքնապաշտպանական մարտերը Նախիջևանի... Նուխի և Արեշ գավառներում 1918-1920թթ.»*).

Պատմական գիտությունների թեկնածու, Սիսիանի պետական հումանիտար քոլեջի գիտական գծով փոխտնօրեն:

Գիտական ուսումնասիրությունների շրջանակն ընդգրկում է Հայոց ցեղասպանության հիմնահարցերը, մասնավորապես, 1918-20թթ. Կուրի ծախափնյակում իրականացված հայերի կոտորածներին առնչվող արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունը: Հեղինակն է «Հայերի կոտորածներն ու ինքնապաշտպանական մարտերը Նուխի և Արեշ գավառներում 1918-20թթ.» ատենախոսության և նշված թեմայով գիտական մի շարք հոդվածների ու զեկուցումների:

ՄՈՒՐԱԴ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ (*«Հայերի մասնակցությունն առաջին աշխարհամարտին և կամավորական շարժումը»*).

Պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող:

Զբաղվում է 1914-1920թթ. հայկական զինուժի՝ կամավորական շարժման, Կովկասյան ռազմաճակատի հայկական ազգային զորամասերի, Հայաստանի առաջին հանրապետության բանակի պատմության հիմնահարցերով:

Հեղինակ է երեք մենագրության «Հայաստանի Հանրապետության բանակը 1918-1920թթ.» (Եր., 1996), «Հայկական կամավորական խմբերը և ազգային գումարտակները

Կովկասյան ռազմաճակատում 1914-1917թթ.» (Եր., 1999թ.), «Հայրենիք և ծառայություն» (Եր., 2001թ.) և մեկ տասնյակից ավելի գիտական հոդվածների: Նշված խնդիրների շուրջ զեկուցումներով հանդես է եկել հանրապետական և միջազգային մի շարք գիտաժողովներում:

ՄՀԵՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ *(«Հայոց ցեղասպանության պատմագրություն. սփյուռքահայ արդի հրատարակումներ»).*

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հայոց պատմության ամբիոնի վարիչ:

Հիմնական աշխատությունները վերաբերում են հայ ազգային-ազատագրական շարժման, հասարակական-քաղաքական մտքի, Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հիմնահարցերի լուսաբանմանը:

Այդ թեմաներով հեղինակ է բազմաթիվ հոդվածների և գիտական աշխատությունների, մասնավորապես՝ «1915-1916թթ. Հայոց ցեղասպանության հարցերը հայ պատմագրության մեջ» (Երևան, 1998), «19-րդ դարի II կեսի հայ ազգային-ազատագրական շարժման պատմագրությունից» (Երևան, 1987), «Հայոց Մեծ եղեռնը պատմագրության մեջ» (Երևան, 1993) աշխատասիրությունների:

ՍՏԵՓԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ *(«Работа И. Лепсиуса "Германия и Армения 1914-1918»).*

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի Հայկական հարցի, Հայոց ցեղասպանության և հայ-ռուսական հարաբերությունների պատմության բաժնի վարիչ, տեղեկատվության միջազգային ակադեմիայի ակադեմիկոս, հայերի համաշխարհային համերաշխության կազմակերպության վոխ-պրեզիդենտ:

Հեղինակ է քսան մենագրությունների ու գրքերի («Սոցիալական տարբեր կարգ ունեցող պետությունների խաղաղ գոյակցության սկզբունքը», (1956), «Ազգային քաղաքականության սկզբունքները», ռուսերեն, (1967), «ԽՍՀՄ-ի ստեղծումն ու զարգացումը», չեխերեն, (1972), «Հայաստանը Գերմանիայի քաղաքականության մեջ», ռուսերեն, (1975), «Կայզերական Գերմանիայի քաղաքականությունը Արևմտյան Հայաստանի նկատմամբ Առաջին աշխարհամարտի ժամանակ», գերմաներեն, (1979), «Գերմանական աղբյուրները հայերի ցեղասպանության մասին», հ. 1, ռուսերեն, (1991), «Թալեաթ փաշայի դատավարությունը», ռուսերեն, (1992), «Հայոց ցեղասպանությունը», (1995), «Արմին Վեգները և Էրնստ Վերները հայերի ցեղասպանության մասին», (1996), «Յոհաննես Լեփսիուսը և Հայաստանը» (1998) և այլն), ավելի քան 500 գիտական ու հրապարակախոսական հոդվածների:

Աշխատել է գերմանական արխիվներում, որոնցում հայտնաբերված փաստաթղթերի ու նյութերի հիման վրա հրատարակել է մի շարք աշխատություններ Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության մասին:

ՏԻԳՐԱՆ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ *(«Հայոց ցեղասպանության միջազգային իրավական պատասխանատվությունը և Մեծ Բրիտանիան 1915-1923թթ.»).*

ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ասպիրանտ:

Գիտական ուսումնասիրությունների շրջանակն է հայ ժողովրդի նոր և նորագույն պատմության հիմնահարցերը՝ Մեծ Բրիտանիայի Հայոց մեծ եղեռնի նկատմամբ վարած քաղաքականության համատեքստում: Աշխատասիրել է Մեծ Բրիտանիայի արխիվային հաստատություններում՝ հետազոտելով խնդրո վերաբերյալ անգլիական արխիվներում գոյություն ունեցող սկզբնաղբյուրները: Թեկնածուական ատենախոսության թեման է «Հայոց ցեղասպանությունն Օսմանյան Թուրքիայում և Մեծ Բրիտանիան 1915-1918թթ.»:

Հեղինակն է «Հայոց ցեղասպանության դատապարտումը Մեծ Բրիտանիայի խորհրդարանում 1915-1918թթ.», (Եր., 1999) աշխատասիրության և այլ հոդվածների: Զեկու-

ցումներով հանդես է եկել հանրապետության և միջազգային գիտաժողովներում:

ՏԻԳՐԱՆ ՁԱՔԱՐՅԱՆ *(«ԱՄՆ-ի շահերը Օսմանյան կայսրությունում և մարդասիրական օժանդակությունը Հայոց ցեղասպանությունից վերապրածներին (1915-1917)»).*

ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության քանգարան-ինստիտուտի ասպիրանտ: Կենտրոնական Եվրոպական Համալսարանում (Հունգարիա) պաշտպանել է մագիստրական թեզ՝ «Հայոց ցեղասպանությունը և ԱՄՆ-ի մամուլը» թեմայով:

Գիտական ուսումնասիրությունների առարկան՝ հայ ժողովրդի նորագույն պատմության հիմնահարցերը՝ կապված ԱՄՆ-ի քաղաքականության հետ Մեծ եղեռնի տարիներին:

Թեկնածուական ատենախոսության թեման՝ «Ամերիկայի Միացյալ Նահանգները և ցեղասպանությունը 1915-1917 թթ.»: Զեկուցումներով հանդես է եկել տարբեր հանրապետական և միջազգային գիտաժողովներում, հեղինակն է գիտական հոդվածների և աշխատության:

ԱՄԱՏՈՒՆ ՎԻՐԱԲՅԱՆ *(«Սփյուռքահայության դերը հայկական հարցի վերաբարձրացման գործում 1945-1947թթ.»).*

Պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ կառավարությանն առընթեր արխիվային գործի վարչության պետ:

Գիտական ուսումնասիրության շրջանակներում են հայոց նորագույն ժամանակաշրջանի պատմության մի շարք հիմնախնդիրներ՝ Հայաստանի հանրապետության քաղաքական պատմությունը, Խորհրդային Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքը, պետություն-եկեղեցի փոխհարաբերությունները և այլն:

Հեղինակ է «Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով» մենագրության, «Գրիգոր Հարությունյան, կյանքը և գործունեությունը» աշխատության, «Հայաստանի հանրապետությունը 1918-1920թթ.», «Լեռնային Ղարաբաղը 1917-1923թթ.», «Նախիջևան-Ռազդանը 1918-1921թթ.» ժողովածուների և բազմաթիվ գիտական հոդվածների:

ՔՆԱՐԻԿ ԱՎԱԳՅԱՆ *(«Ամերիկահայությունը Հայոց ցեղասպանության տարիներին»).*

Պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող:

Գիտական հետաքրքրությունների որբան ընդգրկում է Սփյուռքի ամենից մեծաթիվ՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի սկզբնավորման ու զարգացման պատմության համակողմանի, ուսումնասիրությունը: Հեղինակ է «Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմություն, առաջին մաս (սկզբնավորումից մինչև 1924թ.)» (Եր., 2000) հետազոտության, նաև գիտական մի շարք հոդվածների, որոնք լույս են տեսել Հայրենիքում և Սփյուռքում: Զեկուցումներով հանդես է եկել հանրապետական և միջազգային մի շարք գիտաժողովներում:

Ներկայումս իր ուսումնասիրությունը շարունակում է ԱՄՆ-ի հայ գաղութի նորագույն շրջանի պատմության ուսումնասիրման ուղղությամբ:

ՌՈԲԵՐՏ ԹԱԹՈՅԱՆ *(«Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Օսմանյան կայսրությունում հայ բնակչության թվաքանակի խնդիրը թուրքական պատմագրության մեջ»).*

ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության քանգարան-ինստիտուտի ասպիրանտ:

Զբաղվում է Օսմանյան կայսրության XIXդ. վերջին և XXդ. սկզբին հայ բնակչության ժողովրդագրական վիճակագրական խնդիրների ուսումնասիրությամբ: Թեկնածուական թեզի թեման է՝ «Հայ բնակչության թվաքանակը Օսմանյան կայսրությունում 1878-1914թթ.»:

ՀԵՐՄԱՆ ԳՈԼՏՑ *(«Գերմանիայի և Հայաստանի միջև. դոկտոր Յոհաննես Լեպսիուս (1858-1926)»).*

Հալլեի Մարտին Լյութերի ան-

վան համալսարանի դոկտոր, Յոհաննես Լեպսիուսի արխիվի անօրեն:

ԱՐՏԵՄ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ *(«Ավստրո-Հունգարիայի արխիվների փաստաթղթերը Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության մասին»).*

Ավստրիահայ պատմաբան, ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր, կինոռեժիսոր:

1964թ. ավարտել է Վիեննայի արվեստի համալսարանը կինոռեժիսորի մասնագիտությամբ, ապա սովորել Վիեննայի համալսարանում, ստանալով պատմական գիտությունների դոկտորի աստիճան: Նկարահանել է շուրջ 70 ֆիլմ:

1982թ. սկսած Ավստրիական արխիվներում ուսումնասիրել է Հայաստանի պատմության հետ առընչվող նյութերը և Վիեննայում գերմաներեն լույս ընծայել փաստաթղթերի և վավերագրերի 12 հատորանոց ժողովածուն: Այս աշխատություններում առանձնահատուկ տեղ ունեն 1915թ. Եղեռնի մասին պատմող ավստրիական փաստաթղթերը:

Հեղինակն է խնդրո առարկա թեմայով բազմաթիվ հոդվածների, զեկուցումներով հանդես է եկել Հայաստանում և արտասահմանում գումարված մի շարք միջազգային գիտաժողովներում: